ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/11» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

22-ը հունվարի 2019թ.
ժամը $12^{00}$

Մասնակցում էին՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի պետի ՊժԿ Ա. Նազարյան,
**գնահատողներ՝**
ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության ՆՏԱ բաժանմունքի պետ, բ/ծ փոխգնդապետ Վ. Վահանյան,
ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության ՆՏԱ բաժանմունքի սպա, բ/ծ մայոր Մ. Գալստյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Հ. Ավետիսյան:
**Քարտուղար՝**
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Ա. Մաղաքյան:

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/11» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Ա. Մաղաքյան)

1. Մասնակիցների՝ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.
*Ընդունվել է որոշում՝ կողմ՝4, դեմ՝ 0:*

**1. Մասնակիցների՝ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.**

---

(Ա. Մաղաքյան)

***1.1 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն 1-ին տեղ զբաղեցրած բոլոր մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներն առկա են:***

1.2 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/11» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում հրավերով նախատեսված պահանջներին 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են էլեկտրոնային աճուրդի հրավերի պահանջներին, ***բացառությամբ ներքոհիշյալ դեպքերի***:

***«Եվրոֆարմ» ՍՊԸ-ի*** կողմից 16-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում «Դեղաչափը և թողարկման ձևը (փաթեթավորում)-ում» նշված է *«8,6մգ/մլ+0,3մգ/մլ+0,33մգ/մլ (կամ 0.49մգ/մլ), 500մլ պլաստիկե փաթեթ»*, անհրաժեշտ է հստակեցնել Ձեր կողմից առաջարկվող ***կալցիումի քլորիդի*** դեղաչափը՝ բացառելով (կամ) արտահայտությունը:

- 16-րդ, 17-րդ և 21-րդ չափաբաժինների մասով ներկայացված՝ առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում անհրաժեշտ է ներառել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/11» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի մաս կազմող տեղեկատվությունը՝ մասնավորապես՝ 1-ին կետը՝ (դեղամիջոցների մնացորդային պիտանելիության ժամկետներին վերաբերող) և 4-րդ կետը՝ (որակի սերտիֆիկատի և ներկրման թույլտվության մասին) տեղեկատվությունները,
- առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմումը **(Հավելված 2)** չի համապատասխանում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/11» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին,

- բացակայում են, որպես **«Մասնագիտական փորձառություն»** որակավորման չափանիշը հավաստող նմանատիպ պայմանագիրը (պայմանագրերը), կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

***«Վարդալ Ֆարմ» ՍՊԸ-ի*** կողմից 2-րդ և 14-րդ չափաբաժինների մասով առաջակվող ապրանքի ամբողջական նկարագրի ***«ապրանքային նշանը»*** դաշտում նշվել է դեղերի «**արտադրողի անվանումը**» անհրաժեշտ է ***«ապրանքային նշանը»*** դաշտում նշել դեղերի «**առևտրային անվանումը**»:

- ***«Արֆարմացիա» ՓԲԸ-ի*** կողմից 10-րդ չափաբաժնի մասով առաջակվող ապրանքի ամբողջական նկարագրի ***«ապրանքային նշանը»*** դաշտում նշվել է «**Ազիթրոմիցին**», որը չի համապատասխանում դեղերի գրանցամատյանում առկա տեղեկատվությանը,

- մասնակցի կողմից ներկայացված հարվերով պահանջվող փաստաթղթերում (Հավելված 2)-ում և (Հավելված 3)-ում կազմակերպության գլխավոր տնօրեն նշված է Ա. Հովհաննիսյանը, սակայն հարվերով պահանջվող որակավորման փաստաթղթերը էլեկտրոնային եղանակով ստորագրված են Յուրա Ստեփանյանի կողմից: Միաժամանակ, դիմում-հայտարարությանը կից ներկայացված լիազորագրով Յուրա Ստեփանյանը լիազորված է եղել մրցույթի փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատելու 02.10.2018թ.-ից և տրվել է 3/երեք/ ամիս ժամկետով, որն ավարտվել է 02.01.2019թ.-ին, իսկ որակավորման փաստաթղթերը ներկայացվել են 09.01.2019թ. (երբ լիազորագիրը վավեր չէր): Որպեսզի էլեկտրոնային ստորագրության առկայությունը հանձնաժողովի կողմից գնահատվի բավարար, անհրաժեշտ է ներկայացնել Յուրա Ստեփանյանի կողմից «Արֆարմացիա» ՓԲԸ-ի հարվերով պահանջվող փաստաթղթերը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատելու իրավասության վերաբերյալ նոր լիազորագիր:

- բացակայում են, որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հավաստող նմանատիպ պայմանագիրը (պայմանագրերը), կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

***«Ջի Թի Սի» ՍՊԸ-ի*** կողմից ***19-րդ չափաբաժնի մասով*** ներկայացված առաջարկը չի համապատասխանում հրավերի պահանջներին մասնավորապես՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության 2 մայիսի 2013թ. N 502-Ն որոշման համաձայն պետական մարմինների կողմից գնումների պլանում կարող են ներառվել միայն Հայաստանի Հանրապետության դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր) ընդգրկված դեղերը, հետևաբար, պետական գնումների առարկա կարող են հանդիսանալ միայն այն դեղամիջոցները, որոնք ներկա պահին Հայաստանի Հանրապետությունում ունեն պետական գրանցում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ձեր կողմից առաջարկված ***«Պիպերացիլին (պիպերացիլինի նատրիում), տազոբակտամ (տազոբակտամի նատրիում) piperacillin (piperacillin sodium), tazobactam (tazobactam sodium)»*** դեղը գրանցված չի ՀՀ-ում՝ ներառված չի դեղերի պետական գրանցամատյանում, ուստի այն չի կարող դառնալ պետական գնումների առարկա: Անհրաժեշտ է սահմանված ժամկետում շտկել անհամապատասխանությունը՝ ներկայացնել ՀՀ-ում գրանցված տարբերակը:

- որակավորման փաստաթղթերում բացակայում է համատեղ գործունեության պայմանագիրը (կոնսորցիում), ընթացակարգի հրավերի 3-րդ կետի համաձայն, համատեղ գործունեության պայմանագիրը առկայության դեպքում մասնակիցը հրավերի 2-րդ հավելվածով նախատեսված գրությունը կից ներկայացնում է համատեղ գործունեության պայմանագրի պատճենը: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Ձեր կողմից հայտով ներկայացված համատեղ գործունեության պայմանագիրը գնահատող հանձնաժողովը հայտերի գնահատման փուլում գնահատելու իրավասություն չի ունեցել, իսկ որակավորման փուլում Ձեր կողմից համատեղ գործունեության պայմանագիրը չի ներկայացվել:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկում է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/11» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ***«Արֆարմացիա» ՓԲԸ-ի, «Եվրոֆարմ», «Ջի Թի Սի» և «Վարդալ ֆարմ» ՍՊԸ-ների*** կողմից ներկայացված շտկումների քննարկման վերջնաժամկետի հաջորդ օրը ժամը 11:00-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

| | |
|---|---|
| Գնահատող(ԳԱՊ) | Ա. Նազարյան |
| Գնահատող | Վ. Վահանյան |
| Գնահատող | Մ. Գալստյան |
| գնահատող | Հ. Ավետիսյան |
| Հանձնաժողովի քարտուղար | Ա. Մաղաքյան |